ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՄՀ կառավարման և վարչարարության քաղաքականություն

WWW.EIU.AM

Փաստ. անվանումը	Եվրասիա միջազգային համալսարանի (ԵՄՀ) կառավարման և վարչարարության քաղաքականություն
Փաստ. N	ԵՄՀ/ՔԿ-ԿԳ-02-01
Հաստատման ամսաթիվը	25/03/2016
Արձանագրության N	8
Հաստատող մարմինը	ԵՄՀ Կառավարման խորհուրդ
Անուն/Ազգանուն/ Պաշտոն	Սամվել Պիպոյան
Ստորագրություն	
Մշակող	ԵՄՀ Որակի ապահովման կենտրոն
Ներդրման/իրականացման պատասխանատու	Ռեկտոր

Փաստաթղթի փոփոխությունները

Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն, ազգանուն, պաշտոն, Ստորագրություն

Քաղաքականության նպատակը	Քաղաքականության նպատակն է ներկայացնել ԵՄՀ կառավարման կառուցվածքը, սկզբունքները, կառավարման քաղաքականության դրույթները, ինչպես նաև պլանավորման, իրականացման, գնահատման և բարելավման առկա մեխանիզմները:
Քաղաքականության և ընթացակարգերի իրականացման սկզբունքները	**Մասնակցություն** Ուսումնառողների և այլ շահառուների բավարարվածությունը տրամադրվող ծառայություններից առաջնային է, առկա են վերջիններիս մասնակցության և հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ: **Թափանցիկություն** Բոլոր քաղաքականությունները, ընթացակարգերը, հաշվետվությունները և այլ փաստաթղթերը տարածվում են շահառուների շրջանակներում և հասանելի են:
Կառավարման մարմինները	Կառավարման մարմինների որոշումների կայացմանը վերաբերվող հարցերը և իրավասությունների շրջանակը սահմանված է ԵՄՀ կանոնադրությամբ և յուրաքանչյուր մարմնի կանոնակարգով, աշխատակարգով: - **Կառավարման խորհուրդը** ձևավորվում է համալսարանի պետական և մասնավոր հատվածը ներկայացնող արտաքին շահակիցների, պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության և հիմնադրի ներկայացուցիչներից: Խորհուրդը ստեղծվում է 5 տարի ժամկետով՝ այդ ընթացքում խորհրդի անդամների մասնակի շրջափոխությամբ: Խորհրդի նիստերը գումարվում են տարեկան առնվազն մեկ անգամ: Արտահերթ նիստերը հրավիրվում են խորհրդի նախագահի առաջարկությամբ կամ խորհրդի անդամների առնվազն 1/3-ի առաջարկությամբ կամ համալսարանի ռեկտորի առաջարկությամբ: - Համալսարանի **գիտական խորհուրդը** համալսարանի ռեկտորի նախագահությամբ գործող ուսումնական, գիտական և գիտատեխնիկական գործունեությունը համակարգող և կարգավորող կառավարման մարմին է: Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Գիտական խորհրդի կազմի մեջ մտնում են համալսարանի ռեկտորը (նախագահ), պրոռեկտորները, համալսարանի գիտական քարտուղարը, ուսումնական և գիտական մասերի վարիչները, ֆակուլտետների դեկանները, ամբիոնների վարիչները, գրադարանի պատասխանատուն, ուսանողական խորհրդի նախագահը ի պաշտոնե, ինչպես նաև համալսարանի ռեկտորի

	ընտրությամբ այլ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ, հանրապետության գիտության և կրթության առաջատար մասնագետներ (ընդհանուր թվի մինչև 15 տոկոսի չափով): Կազմի 25 %-ը ուսանողներ են՝ ներառյալ ուսանողական խորհրդի նախագահը: - Համալսարանի ընթացիկ ղեկավարումն իր իրավասության սահմաններում իրականացնում է գործադիր մարմինը՝ համալսարանի **ռեկտորը**, ով ընտրվում է համալսարանի հիմնադիրների խորհրդի կողմից: Համալսարանի ռազմավարական խնդիրների առավել արդյունավետ իրականացման նպատակով կառավարման մարմինները կարող են ստեղծել **աշխատանքային խմբեր**, որոնց աշխատանքի ընթացիկ վերահսկողությունն իրականացնում է ռեկտորը կամ պրոռեկտորները՝ ըստ կառավարման համապատասխան մարմնի կայացրած որոշման:
Կազմակերպական կառուցվածք	Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներ են համարվում ֆակուլտետները, ամբիոնները, բաժինները, կենտրոնները և այլն: Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանվում են կանոնակարգերով, կարգերով, ընթացակարգերով:
Քաղաքականության դրույթները	- Համալսարանի կառավարման և վարչարարության քաղաքականության և կառավարման մարմինների գործունեության հիմքում ընկած է ԵՄՀ որակի ապահովման քաղաքականությունը: - Համալսարանի կառավարման մարմիններն ամրագրված են համալսարանի Կանոնադրությամբ, ըստ որի կառավարումն իրականացվում է միանձնյա ղեկավարման և կոլեգալության սկզբունքների զուգակցմամբ կառավարման խորհրդի (կառավարման խորհուրդ), գիտական խորհրդի և ռեկտորատի գործառույթների իրականացմամբ: - Համալսարանի քաղաքականությունն է կառավարման մարմիններում ապահովել բոլոր շահառուների ներկայացուցչական մասնակցությունը՝ թափանցիկ, հաշվետվողական և մասնակցողական կառավարման նպատակով:

	1. Պլանավորում Համալսարանում պլանավորումն իրականացվում է երեք մակարդակներում. - ռազմավարական - գործառնական - անհատական (աշխատանքային և զարգացման ծրագրեր) Համալսարանը նշված մակարդակներում պարբերաբար իրականացնում է պլանավորում՝ ուղղված ռազմավարական նպատակների իրականացմանը: Համալսարանի ռազմավարական և գործառնական ծրագրերում առկա նպատակներին և խնդիրներին կից հստակ ներկայացվում են ակնկալվող որակական կամ քանակական արդյունքներ: Պլանավորման հիմքում ընկած է ներքին և արտաքին շահակիցների կարիքների և պահանջների բացահայտումը, համալսարանի առկա ռեսուրսների ու հնարավորությունների գնահատումը: Անհատական աշխատանքային և զարգացման պլանները քննարկվում են գծային ղեկավարի հետ, որն էլ արդյունքները ներկայացնում է կառավարման համապատասխան մարմիններին: **2. Նպատակների և խնդիրների վերանայում** - Համալսարանի առաքելության, ռազմավարական նպատակների, ոլորտային քաղաքականությունների փոփոխությունները կարող են լինել հիմնարար կամ ոչ հիմնարար, աննշան (որոնք չեն փոխում գործունեության ոլորտը, ուղղությունը և այլն): - Հիմնարար փոփոխությունների վերաբերյալ առաջարկները ներկայացվում են կառավարման խորհրդին և կատարվում քվեարկության միջոցով: - Ոչ հիմնարար փոփոխությունները կարող են իրականացվել ռեկտորատի կողմից՝ փոփոխության վերաբերյալ տեղյակ պահելով կառավարման խորհրդի անդամներին: - Առաքելության, ռազմավարական նպատակների, ոլորտային քաղաքականությունների իրականացման արդյունավետությունը քննարկվում է համալսարանի կառավարման խորհրդի տարեկան ամփոփիչ նիստի ժամանակ, պատասխանատուների կողմից ներկայացվում են հաշվետվություններ:

- Անհրաժեշտության դեպքում կառավարման խորհրդի որոշմամբ վերանայվում են նշված փաստաթղթերը:

3. Կանոնակարգերի, կարգերի, ընթացակարգերի փոփոխություն

Համալսարանի կառավարման խորհրդի, գիտական խորհրդի անդամները, բոլոր աշխատակիցները, ուսանողները կարող են առաջարկել փոփոխություններ համալսարանի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերում ըստ «ԵՄՀ Փաստաթղթերի կառավարման ընթացակարգի»:

Կազմակերպական կառուցվածքում (Տես ԵՄՀ կազմակերպական կառուցվածքը՝ Հավելված 1) կառավարման մարմինների, ստորաբաժանումների, բաժինների համարներով կոդավորվում են բոլոր կարգերը, կանոնակարգերը, գործընթացները և այլ փաստաթղթեր, դրանք հասանելի են շահառուներին:

Յուրաքանչյուր փաստաթուղթ ունի պատասխանատու, ով պարտավոր է ապահովել փատաթղթի ճշգրիտ ներդրումը և պարբերաբար վերանայել:

Կանոնակարգերում, կարգերում և ընթացակարգերում արդյունավետության բարձրացման նպատակով կատարված փոփոխությունները հաստատվում են ռեկտորի կողմից: Հիմնարար փոփոխությունները, որոնք կարող են ազդել ոլորտի քաղաքականության իրականացման վրա, քննարկվում և հաստատվում են գիտական խորհրդում:

4. Մոնիտորինգ և հաշվետվողականություն

4.1 Ռազմավարական մակարդակ

Կառավարման խորհրդի յուրաքանչյուր նիստին ռեկտորը և պրոռեկտորները ներկայացնում են համալսարանի գործունեության վերաբերյալ հաշվետվություն՝ ներառյալ տեղեկատվություն՝

- բուհի ֆինանսական կարգավիճակի մասին,
- ռազմավարական նպատակների իրականացման ընթացքի մասին,
- այլ հարցերի մասին՝ ըստ կառավարման խորհրդի պահանջի:

Ռեկտորը կազմում է տարեկան հաշվետվություն, որը տեղադրվում է համալսարանի պաշտոնական կայքէջում: Տարեկան հաշվետվությունը ներառում է մանրակրկիտ նկարագրություն կատարված աշխատանքների՝ ըստ Ռազմավարական նպա-

տակների, ինչպես նաև ՈԱ ուղեցույցում նշված Ռազմավարական ցուցանիշների:

4.2 Գործառնական մակարդակ

Յուրաքանչյուր գործառնական ստորաբաժանման պատասխանատու անմիջական ղեկավարին ներկայացնում է հաշվետվություն, իսկ մշտադիտարկումն իրականացվում է ղեկավարի կողմից՝ ըստ նախանշված ակնկալվող արդյունքների:

Ըստ անհրաժեշտության իրականացվում է նաև քաղաքականությունների իրականացման, կարգերի, կանոնակարգերի, ընթացակարգերի գործարկման մոնիտորինգ:

4.3 Անհատական

Անհատական աշխատանքային և զարգացման պլաններին համապատասխան հաշվետվությունները քննարկվում են անմիջական ղեկավարի հետ, ով էլ արդյունքները ներկայացնում է կառավարման համապատասխան մարմիններին:

5. Որակի ապահովում

- Կառավարման մարմինների մասնակցությունից զատ շահառուների համար համալսարանի որակի ապահովման կենտրոնն ապահովում է մեխանիզմներ՝ գնահատելու, ներկայացնելու պահանջներ, մասնակցելու համալսարանի որակի բարելավման գործընթացներին:

- Որակի ապահովման գործընթացներում առավել լայն շահակիցների ներգրավման նպատակով ընտրվում են Որակի ապահովման ամբիոնային գործակալներ, ինչպես նաև Ուսանողական Խորհրդի կազմում կազմավորվում է Որակի ապահովման հանձնախումբ կամ յուրաքանչյուր ամբիոնից Որակի ապահովման կենտրոնի աշխատանքներին ներգրավվում են կամավոր ուսանողներ:

- Համալսարանի որակի ապոհվման կենտրոնը ենթարկվում է համալսարանի Կռավարման խորհրդին:

6. Արտաքին գնահատում

Համալսարանը պետականորեն սահմանված կարգին և ժամկետներին համապատասխան պարբերաբար անցնում է արտաքին գնահատում ԿԳ նախարարության և «Մասնագիտական ուսուցման որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից՝ վերալիցենզավորման և վերահավատարմագրման նպատակով:

Ու՞մ է վերաբերվում քաղաքականությունը	Քաղաքականությունը վերաբերվում է համալսարանի կառավարման մարմինների ներկայացուցիչներին, աշխատակիցներին, ուսանողներին:
Քաղաքականության իրականացման պատասխանատու մարմինը	Քաղաքականության իրականացման համար պատասխանատու է համալսարանի ընթացիկ ղեկավարումն իրականացնող մարմինը՝ ռեկտորը:
Քաղաքականության վերանայման պարբերականությունը	Քաղաքականությունը վերանայվում է ըստ անհրաժեշտության՝ Կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով: Վերանայման համար հիմք են հանդիսանում իրականացված ներքին և/կամ արտաքին աուդիտի հաշվետվությունները, որակական հետազոտությունները, վերլուծությունները: Եթե հաստատվում են փոփոխությունները, վերանայվում է քաղաքականությունը և հաստատված տարբերակը տեղադրվում է փաստաթղթերի էլեկտրոնային ռեգիստրում:
Տարածում	Քաղաքականությունը տեղադրվում է փաստաթղթերի էլեկտրոնային ռեգիստրում, պաշտոնական կայքէջում, ինչպես նաև ներկայացվում է նիստերի, ուսանողների և աշխատակազմի հետ հանդիպումների ժամանակ: Քաղաքականության դրույթներն արտահայտող հաստատված փաստաթուղթը տարածվում է համալսարանի կայքի, ներքին և արտաքին ցանցերի միջոցով, ինչպես նաև փակցվում է համալսարանի բոլոր ստորաբաժանումներում, ուսանողների, աշխատակիցների և արտաքին շահառուների համար տեսանելի վայրերում: